«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
Ռեկտորի 04.04.2023 թ. թիվ 286 Ա/Մ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 10 30.03.2023թ.

Վանաձոր
2023

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգով կարգավորվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՎՊՀ) Կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոնի (այսուհետ՝ ԿԲՎ կենտրոն) խնդիրները, գործառույթները, իրավասությունները, կառավարումը, ՎՊՀ ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1.2 ԿԲՎ կենտրոնը ՎՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որն առաջնորդվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԳՄՍ նախարարության նորմատիվային փաստաթղթերով, ՎՊՀ կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով և սույն կանոնակարգով:

1.3 ԿԲՎ կենտրոնն անմիջականորեն ենթարկվում է ՎՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

1.4 ԿԲՎ կենտրոնի կանոնակարգը հաստատվում է ՎՊՀ գիտական խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում ռեկտորի կողմից հաստատման պահից:

1.5 ԿԲՎ կենտրոնը կազմավորվում, վերակազմակերպվում և լուծարվում է ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

II. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 ՎՊՀ աշխատակիցների և այլ շահակիցների կրթական բարեփոխումների և վերապատրաստման կարիքների վերհանում:

2.2 Կրթական բարեփոխումներին և վերապատրաստման գործընթացներին նվիրված սեմինարների, քննարկումների, խորհրդակցությունների կազմակերպում:

2.3 Կրթական գործընթացին վերաբերող բարեփոխման ծրագրերի մշակում և ներկայացում:

2.4 ՎՊՀ աշխատակիցների որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացի կազմակերպում:

2.5 Տարբեր շահակիցների վերապատրաստման և որակավորման բարձացման դասընթացների կազմակերպում:

III. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1 Բոլոնյան սկզբունքներին համահունչ, բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող կրթական բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվական նյութերի հավաքագրում և վերլուծություն:

3.2 ՎՊՀ-ի ռազմավարական զարգացման պլաններով նախատեսած կրթական բարեփոխումների և վերապատրաստումների կարճաժամկետ և երկարաժամկետ աշխատանքների պլանավորում, կազմակերպում, համակարգում, վերլուծություն:

3.3 ՎՊՀ կրթական գործընթացին վերաբերող փաստաթղթերի՝ կարգերի, ուղեցույցերի և այլ անհրաժեշտ նյութերի մշակում և ներդնում:

3.4 ԿԲՎԿ կրթական ծրագրերի բարեփոխման, նոր ծրագրերի ներդրման համար անհրաժեշտ տեղեկատվության և ձևաչափերի մշակում:

3.5 ՄԿԾ-ների պարբերաբար ուսումնասիրություն, բարելավման ուղղությամբ առաջարկների ներկայացում:

3.6 ՎՊՀ-ում ուսումնառության գործընթացի, առանձնահատկությունների, շարժունության, լրացուցիչ և ոչ ֆորմալ կրթության, ուսուցման հնարավորությունների, նմանատիպ այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

3.7 Ֆակուլտետների, ստորաբաժանումների հետ համագործակցում և նրանց՝ կրթական բարեփոխումների ուղղությամբ իրականացվող աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

3.8 ՎՊՀ աշխատակիցների ընդհանրական, մասնագիտական, գիտական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացում:

3.9 Մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում և հսկաում:

3.10 Աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա տարբեր շահակիցների վերապատրաստման և որակավորման բարձացման դասընթացների կազմակերպում՝ նորարարական մեթոդաբանության կիրառմամբ:

3.11 Կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների միջոցով տարբեր շահակիցների զբաղվածության հնարավորության բարձրացում:

3.12 Կրթական բարեփոխումների գործընթացի ՎՊՀ հաշվետվողականության ապահովում ներքին և արտաքին շահակիցների միջև:

IV. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

4.1 ԿԲՎ կենտրոնն իր գործառույթների իրականացման նպատակով իրավասու է համագործակցելու ՎՊՀ բոլոր ստորաբաժանումների հետ:

V. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 ԿԲՎ կենտրոնի աշխատանքներն անմիջականորեն ղեկավարում է ԿԲՎ կենտրոնի ղեկավարը, որը նշանակվում և ազատվում է այդ պաշտոնից ռեկտորի հրամանով:

5.2 ԿԲՎ կենտրոնի ղեկավարը կատարում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունից և այլ իրավական ակտերից բխող պարտականությունները և ունի այդ իրավական ակտերով սահմանված իրավունքները:

5.3 Կենտրոնի աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը բխում են ԿԲՎ կենտրոնի նպատակներից, խնդիրներից և գործունեության ուղղություններից և ամրագրվում են պաշտոնի և պաշտոնի անձնագրով սահմանված աշխատանքային գործառույթներով:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն կանոնակարգը ուժի մեջ մտնելուց հետո, ուժը կորցրած ճանաչել ՎՊՀ գիտական խորհրդի կողմից 24.12.2015թ. ընդունված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի կրթական բարեփոխումների բաժնի» կանոնադրությունը, 24.12.2015թ. ընդունված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի շարունակական (հարատև) կրթության կենտրոնի» կանոնակարգը: